ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Լիոն (Ֆրանսիայի Հանրապետություն)

գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**

Ժորա Սարգսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ֆրանսիայի Հանրապետություն, Լիոն քաղաք, 2025 թվականի ապրիլի 7-ից մինչև ապրիլի 9-ը

4. **Հրավիրող կողմը.**

Էրազմուս+ ծրագրի շրջանակներում մեկնարկած IMPROVET-AM ծրագրի կոորդինատոր հանդիսացող ՍԵՊՌ (Ռոնի մասնագիտական ուսուցման ընկերություն) ասոցիացիա

5. **Գործուղման նպատակը**.

2024 թվականի դեկտեմբերին Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում (ՍԵՊՖԱ) տեղի են ունեցել Էրազմուս+ ծրագրի շրջանակներում մեկնարկած IMPROVET-AM ծրագրի շուրջ աշխատանքային ձևաչափով հանդիպումներ: Նշյալ ծրագրի ասոցացված գործընկերներ են համարվում Աշխատանքի և սոցիալական հարցերի, ինչպես նաև ԿԳՄՍ նախարարությունները: Ֆրանսիայից և Իտալիայից ՀՀ ժամանած ներկայացուցիչների հետ քննարկել ենք մասնագիտական կողմնորոշման, աշխատանքի և սոցիալական ծառայություններին վերաբերող հարցեր, ներկայացուցիչները ներկայացրել են իրենց երկրների լավագույն փորձը:

6. **Քննարկված թեմաները.**

Այցի ընթացքում իրականացվեց փորձի փոխանակում մասնագիտական կողմնորոշման ու կարիերայի ուղղորդման, կրթական համակարգի թվայնացման, նորարարական մեթոդաբանությունների կիրառման թեմաներով:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հանդիպման առաջին օրը մասնակիցներին ողջունեց ՍԵՊՌ ուսումնական կենտրոնի նախագահ Քրիստիան Դրոզը, ով ներկայացրեց միջազգային համագործակցության ծրագրի կարևորությունը հայ-ֆրանսիական հարաբերությունների զարգացման գործում: Մասնակիցներին ողջունեց նաև Լիոնում Հայաստանի գլխավոր հյուպատոս Նարինե Նիկոլյանը, ով իր խոսքում կարևորեց մասնագիտական կրթությունը երիտասարդների համար՝ հատկապես դուալ կրթությունը:

Ծրագրի մասնակիցներին ողջունեցին նաև Լիոնի Մետրոպոլի միջազգային կապերի տնօրեն Քրիստոֆ Մոնիեն, Լիոնի քաղաքապետարանի միջազգային կապերի գծով տնօրեն Էմիլի Միրջանյանը, Օվերն-Ռոն-Ալպ շրջանի՝ Հայաստանի հետ կապերի համակարգող Անյես Էրնյուն:

Այցի ընթացքում ներկայացվեց նաև ծրագրի մանրամասները, այնուհետև պատվիրակությունը մեկնեց՝ մասնակցելու «Արհեստների քարավան» տոնավաճառին, որի ընթացքում ծանոթացում կատարվեց առաջարկվող և արդի ժամանակաշրջանում մեծ պահանջարկ ունեցող թիրախային մասնագիտություններին:

Այցի երկրորդ օրը հնարավորություն ունեցանք հանդիպելու Օվերն - Ռոն - Ալպ տարածաշրջանի ՄԿՈՒ գծով փոխնախագահ Ժակ Բլանշեի, մասնագիտական կողմնորոշման գծով տնօրենի տեղակալ Ալեքսանդրա Շամբազի և միջազգային կապերի տնօրինության ֆրանկոֆոնիայի և զարգացման գծով տնօրեն Ֆրանսիս Բուլամոյի հետ: Վերջիններս ներկայացրին ռեգիոնալ կառույցների ռազմավարությունը, գործառնական ընթացակարգերը և սխեմատիկ կառուցվածքները մասնագիտական կողմնորոշման մասով:

Նույն օրը հանդիպում տեղի ունեցավ նաև ինֆորմալ և ոչ ֆորմալ կարողությունների ճանաչման ընթացակարգերի վարման քաղաքականություն մշակող պատասխանատու կառույցի ներկայացուցչի հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ժամանակ որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հայաստանում ներդնել եվրոպական լավագույն փորձը՝ դրանք ադապտացնելով տեղական կարիքների հետ: Մասնավորապես, Հայաստանում առաջարկում եմ ստեղծել արհեստագործական քաղաք, որտեղ երիտասարդներին կուսուցանվեն միջին մասնագիտական և արհեստագործական ամենապահանջված մասնագիտությունները, որն էլ հնարավորություն կտա վերջիններիս լինել աշխատաշուկայում մրցունակ և առավել հեշտ մուտք գործել աշխատաշուկա:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Recoverable Signature

X

Signed by: ZHORA SARGSYAN 3604850193

_____ **Ժ. Սարգսյան**

15.04.2025